

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Բարբառների մանկական բառապաշարը լեզվի զարգացման վաղնջական շրջանից, հազարամյակների խորքից եկած այն բառերն են, որոնք արտահայտում են որոշակի կայուն իմաստ ու նշանակություն, և որոնց հիմքի վրա կրտսեր տարիքի (մեկից երեք տարեկան) բարբառախոս երեխան փորձում է հասկանալ մեծերին, մտքեր արտահայտել և զարգացնել սեփական բառապաշարը՝ վեց տարեկանում հասցնելով երկու հազար և ավելի բառի¹:

Մանկական խոսքի, մանկական բառապաշարի ուսումնասիրությունը լեզվաբանության, մասնավորապես հոգելեզվաբանության յուրահատուկ բնագավառներից է: Լեզվաբանական գրականության մեջ թեև կան հայերենի մանկական խոսքի ուսումնասիրությանը նվիրված առանձին աշխատանքներ², այնուամենայնիվ, թե՛ դասական բարբառագիտական աշխատանքներում և թե՛ ժամանակակից հեղինակների աշխատանքներում բարբառների մանկական բառապաշարի ուսումնասիրությանը, ցավոք, հատուկ ուշադրություն չի դարձվել և սուսկ սահմանափակվել է բառացանկում կամ շարադրանքում բառանմուշների արձանագրմամբ կամ հպանցիկ անդրադարձով: Բացառություններ են, թերևս, անցյալ դարասկզբին Հրաչյա Աճառյանի կոմից հրապարակված «Մանկական բարբառ» հոդվածը³, ինչպես նաև 2003թ. մեր կողմից հրապարակված «Վայոց ձորի խոսվածքի մանկական բառապաշարը» հոդվածը⁴: Առաջինում մեծանուն հայերենագետը առաջին անգամ ուսումնասիրել է հայերենի բարբառների մանկական բառապաշարը մի շարք բարբառների ընձեռած նյութի հիման վրա, երկրորդում մանրամասն ուսումնասիրել ենք Հյուսիսային Նախիջևանի և Վայոց

¹ Ժ. Կոնդակչյան, *Մեկից յոթ տարեկան երեխաների բառապաշարը*, Ե., 1981, էջ 6-9:

² Ա. Գալստյան, *Մանկական խոսք*, Ե., 2006: Ա. Գալստյան, *Մանկական խոսքի բառապաշարը և նրա զարգացումը*, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2006, էջ 38-43: Ա. Գալստյան, *Հայերեն մանկական խոսքի դրսևորումների վերլուծության հարցեր*, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2007, էջ 42-48: Ա. Գալստյան, *Մանկական խոսքի ուսումնասիրության մի քանի հարցեր*, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2009, էջ 43-49:

³ Հ. Աճառեան, *Մանկական բարբառ*, Բանասեր, Պարիս, 1901, պրակ Ա, հ. 3, էջ 3-28:

⁴ Ա. Վարդանյան, *Վայոց ձորի խոսվածքի մանկական բառապաշարը*, Պատմաբանասիրական հանդես, 2003, թիվ 2, էջ 272-275:

ձորի խոսվածքների (Վայոց ձորի կամ Ճահուկ-Վայքի միջբարբառ) մանկական բառապաշարը:

Նշված աշխատանքում Աճառյանը ներկայացրել է հայերենի բարբառների մանկական լեզվի մոտ 300 բառ ընդգրկող բառացանկը, ըստ բառապաշարի բաժանել **մանկական ձևերի** (միայն տվյալ մանկանը բնորոշ բառեր) և **ընդհանուր ձևերի** (բոլոր մանուկներին բնորոշ համընդհանուր բառեր): Աճառյանը ուսումնասիրել է նաև մանկական լեզվի հնչյունաբանությունը, նշել, որ այն շաղկապված է տվյալ բարբառի հնչյունական համակարգի հետ, բառապաշարը բաժանել է նաև իմաստային շերտերի՝ ազգակցություն արտահայտող բառեր, մարմնի մասեր, սնունդ, առարկաներ, կենդանիներ, խաղեր և այլն:

Մանկական լեզուն, բնականաբար, չունի քերականություն, նրան խորթ են նաև հոդառությունը, հոլովումն ու խոնարհումը: Աճառյանը ըստ ձևաբանության մանկական լեզվի բառապաշարը բաժանում է գոյականների, ածականների և բայերի: Դրանց թերևս կարելի է ավելացնել նաև ձայնարկությունները, քանի որ ձայնարկությունների հիմքով ստեղծված մանկական բառերը շարունակում են կիրառվել նաև որպես սոսկ ձայնարկություններ: Սակայն, քանի որ երեխայի խոսքի մեջ ձևաբանական, ինչպես նաև շարահյուսական հստակ սահմանազատումներ չկան, միևնույն բառը կարող է կիրառվել ոչ միայն որպես գոյական կամ ածական, այլև որպես բայ: Օրինակ՝ Ճահուկ-Վայքի միջբարբառում **տաղա ուֆ** արտահայտությունը կարող է նշանակել «տատիկը հիվանդ է», **դիջի ուֆ** արտահայտությունը՝ «ատամն ցավում է», **կուզու սոդո** արտահայտությունը կարող է նշանակել և՛ «տիկնիկի ոտքը», և՛ «երեխան քայլում է»:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև մանկական լեզվի բառերի առաջացման ձևերը: Թեև մեր հիշյալ հոդվածում Ճահուկ-Վայքի միջբարբառի մանկական բառապաշարի օրինակով մասամբ անդրադարձել ենք այդ հարցին⁵, փորձենք առավել լիարժեք խմբավորել հայերենի բարբառների մանկաբառերի առաջացման հիմքերը:

Ուսումնասիրելով հայերենի տարբեր բարբառների մանկաբառերը՝ կարող ենք առանձնացնել հետևյալ խմբերը՝ ըստ դրանց առաջացման հիմքերի.

1. Ձայնարկություններից առաջացած բառեր՝ **ախ, ախա** (Վան, Թավրիզ⁶, Ճահուկ-Վայք⁷) («ծեծել»՝ զայրույթ արտահայտող **ա՛խ** ձայնարկությունից), ^{օջ} (Ճահուկ--

⁵ Նույն տեղում:

⁶ **Հ. Աճառեան**, նշված աշխատանքը, էջ 5:

⁷ **Ա. Վարդանյան**, նշված աշխատանքը, էջ 274:

Վայք) («անուշ, քացր, հաճելի»՝ բավականությունն արտահայտող օ՛ջ (< օշ («երանի») ձայնարկություննից), **փու** (Ճահուկ-Վայք), **փծ** (Վան), **փծհ** (Պոլիս⁸) («ժանտահամ, կեղտոտ, զզվելի, տգեղ»՝ զզվանք արտահայտող **փու՛ւ(ֆ)** ձայնարկություննից), **բրծօ** (Ճահուկ-Վայք) («հորթ»՝ հորթին կանչելու **բրծօ՛-բրծօ՛** ձայնարկություննից), **բրծի** (Ճահուկ-Վայք, Խոյ⁹) («կով»՝ կովին կանչելու **բրծի՛-բրծի՛** ձայնարկություննից), **գրդօ** (Ճահուկ-Վայք) («ուլ»՝ ուլին կանչելու **գրդօ՛-գրդօ՛** ձայնարկություննից), **գրդի** (Ճահուկ-Վայք) («այծ»՝ այծին կանչելու **գրդի՛-գրդի՛** ձայնարկություննից), **փրշօ** (Ճահուկ-Վայք, Վան) («կատվի ձագ»՝ կատվի ձագին կանչելու **փրշօ՛-փրշօ՛** ձայնարկություննից), **փրշի(կ)** (Վան, Խոյ, Ճահուկ-Վայք, Թավրիզ,) («կատու»՝ կատվին կանչելու **փրշի՛-փրշի՛** ձայնարկություննից), **քրջօ** (Բայազետ¹⁰, Ճահուկ-Վայք) («շան լակոտ»՝ շան լակոտին կանչելու **քրջօ՛-քրջօ՛** ձայնարկություննից), **քուշի** (Թավրիզ, Խոյ, Ճահուկ-Վայք, Խաղիսաղ¹¹, Բայազետ) («շուն»՝ շանը կանչելու **քուշի՛-քուշի՛** ձայնարկություննից), **ջօջօ**, **ջօջօշ** (համապատասխանաբար «քուռակ», «ավանակ»՝ ավանակին քշելու **ջօ՛շջ** ձայնարկություննից), **վուվու** (Վան) («սիրուն, գեղեցիկ»՝ հիացմունք արտահայտող **վո՛ւ ւյ** ձայնարկություննից), **վավա** (Վան, Բայազետ), **ուֆ** (Ճահուկ-Վայք) («ցավ, ցավել, վերք, հիվանդություն, հիվանդանալ»՝ ցավ արտահայտող **վա՛ւ, ու՛ ֆ** ձայնարկություններից), **ճուճու** (Բայազետ, Վան, Մուշ, Կարին¹², Թավրիզ, Ճահուկ-Վայք), **ճծճծ** (Խոյ) («հավ, թռչուն»՝ հավերին կանչելու **ճո՛ւ-ճո՛ւ** ձայնարկություննից) և այլն:

2. Բնաձայնություններից առաջացած բառեր՝ **զրնզրլ** (Ճահուկ-Վայք) («խաղալիք»՝ զրնզոցի ձայնի նմանակումից), **ճրնզրլ** (Ճահուկ-Վայք) («երաժշտություն, նվագարան, նվագել»՝ ճրնզոցի ձայնի նմանակումից), **ղիջի** (Ճահուկ-Վայք) («ատամ»՝ ատամների կրճտոցի նմանակումից), **նօմնօմ** (Ճահուկ-Վայք) («ուտել»՝ ծամելու ձայնի նմանակումից), **ֆրֆծ, փծհծ** (Թավրիզ), **ֆուֆու** (Ճահուկ-Վայք), **ուֆու** (Վան¹³) («ճաշ»՝ տաք ճաշը փչելու ձայնի նմանակումից), **լուլու** (Վան, Ճահուկ-Վայք) («մեզ, միզել (տղաների)» տղաների միզելու ձայնի նմանակումից), **չիշ(ի)** (Ճահուկ-Վայք) («մեզ, միզել (աղջիկների)»՝ աղջիկների միզելու ձայնի նմանակումից), **քրխ** (Ակն¹⁴, Թավրիզ, Պոլիս, Մուշ, Խոյ, Կարին, Վան, Ճահուկ-Վայք) («վատ, ժանտահամ, կեղտոտ»՝ կոկորդր

⁸ **Հ. Աճառեան**, նշված աշխատանքը, էջ 11:

⁹ **Հ. Աճառեան**, նշված աշխատանքը, էջ 6:

¹⁰ **Վ. Կատվայան**, *Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ*, Ե. 2016, էջ 43:

¹¹ **Հ. Աճառեան**, նշված աշխատանքը, էջ 11:

¹² **Հ. Աճառեան**, նշված աշխատանքը, էջ 8:

¹³ **Հ. Թուրջյան**, *Բառարան Վանի բարբառի*, Ե., 2007, էջ 146:

¹⁴ **Հ. Աճառեան**, նշված աշխատանքը, էջ 11:

մաքրելու ձայնի նմանակումից), **խըշ** (Ակն), **խըռթ** (Պոլիս) («կտրել»՝ կտրելու ձայնի նմանակումից), **ճըռթ** (Պոլիս) («պատռել, պատռվել»՝ պատռվելու ձայնի նմանակումից), **կուկուլիկու** (Պոլիս), **կուկուլիկու** (Թավրիզ), **կուկրուկու** (Ակն), **ծուգուկու** (Ճահուկ-Վայք) («աքաղաղ»՝ աքաղաղի ձայնի նմանակումից), **հեփչու** (Պոլիս), **հ^օփչի** (Ճահուկ-Վայք) («փռչտալ»՝ փռչտալու ձայնի նմանակումից), **փօֆփօֆ** («շոգենավ»՝ շոգենավի արձակած ձայնի նմանակումից) (Պոլիս), **փուֆ** (Պոլիս), **փու** (Երևան) («հանգցնել»՝ փչելու ձայնի նմանակումից) (Պոլիս), **վուվու** (Բայազետ) («ավտոմեքենա»՝ ավտոմեքենայի ձայնի նմանակումից), **մե** (Պոլիս) («ոչխար»՝ ոչխարի ձայնի նմանակումից), **օլուլ||նլուլ** (Այնթապ¹⁵) («տաք, կծու»՝ տաք, կծու ուտելիքի զգացողության ձայնի նմանակումից), **ըհ(ը)** (Պոլիս), **ըըն** (Ճահուկ-Վայք), **ասն** (Ջուղա¹⁶), **օն** (Թավրիզ) («կղել»՝ կղելու ձայնի նմանակումից) և այլն:

3. Բարբառային բառերի կրճատված-պարզեցված տարբերակներ, որոնք կարելի է բաժանել երկու ենթախմբերի՝

ա) մեծերի կողմից ստեղծված բառերի ենթաշերտ՝ **աջա** (Ճահուկ-Վայք) («ականջ»), **թ^օթիկ** (Բայազետ) («թաթիկ»), **թ^օթի** (Ճահուկ-Վայք) («թաթիկ»), **ծիծիկ** (Վան, Բայազետ, Պոլիս), **ծիծի** (Ճահուկ-Վայք) («ծիծ, ստինք»), **ջի** (Ճահուկ-Վայք), **ջչի** (Բայազետ) («աչք»), **ծաձա** (Ճահուկ-Վայք) («ծամոն»), **ծ^օծ^օղ** (Վան), **ծածի** (Ճահուկ-Վայք) («ծաղիկ»), **ծաձի** (Ճահուկ-Վայք) («ձվածեղ»), **ծիծի** (Ճահուկ-Վայք) («ձի»), **բըլի** (Ճահուկ-Վայք) («բզեզ (բլոճ), միջատ»), **պըլու** (Ակն), **պըլն** (Վան) («միջատ, ոջիլ, ճանճ, որդ») և այլն:

բ) մանուկների կողմից ոչ լիարժեք արտասանության հետևանքով ստեղծված բառերի ենթաշերտ՝ **ախցիկ** («աղջիկ»), **այչ** («արջ»), **բեյան** («բերան»), **ձուր** («ջուր»), **ցամից** («չամիչ»), **տատու** («կատու»), **թընել** («քնել»), **օկօր** («ոսկոր»), **հօլօք** («խելոք»), **կօլօխ** («զլուխ») և այլն:

Վերջինս տեղի է ունեննում երեխաների կողմից որոշ հնչյունների ոչ լիարժեք արտասանության հետևանքով¹⁷, մասնավորապես՝ **բ, ռ** ձայնորդները արտասանվում են **յ**, հաճախ **ջ, ճ, չ** պայթաշփականները արտասանվում են համապատասխանաբար **ձ, ծ, ց, ց**, իսկ **գ, կ, ք** հետնալեզվայինները՝ **ղ, տ, թ**, հաճախ նաև տեղի է ունենում դժվար արտասանվող որոշ հնչյունների կրճատում:

4. Առանձին ուսումնասիրության արժանի, ըստ երևույթին՝ հայերենի բառապաշարի ավելի հին շերտերի բառեր՝ **տօտօ**, **տօտիկ** («ոտք»), **տոտուկ** («հետույք»), **կօկօ**, **կօկօլ**, **կուճի(կ)**, **կուջի**, **կօկօճ** («զլուխ»), **կօգօգ** («գայլ, գազան, հրեշ»),

¹⁵ **Հ. Մեսրոպյան**, *Ածականական հոմանիշները հայերենի բարբառներում*, Ե. 2010, էջ 117-118:

¹⁶ **Վ. Տէր-Մուքեասեան**, *Բառարան Նոր Ջուղայի բարբառի*, Ե., 2016, էջ 9:

¹⁷ **Հ. Աճառեան**, նշված աշխատանքը, էջ 13:

փափա («հաց»), **բու**, **բուվա** («ջուր»), **ջ՞ջուվ** («գեղեցիկ, սիրուն»), **ճուճ(ուվ)**, **ճուջ(ուվ)** («երեխայի արական սեռական անդամ»), **պըպօ** («տղա երեխա»), **շիշի** («գիրկ, շալակ, գրկել, շալակել»), **ճիժի**, **ճըզ** («կրակ, լույս, այրել»), **տիտի**, **տիտիկ**, **տիդի** («նստել»), **չուչու**, **չուչուկ**, **չուչիկ** («մանկան երկար զգեստ») և այլն:

Օրինակ, վերջին խմբին դասվող **փափա** («հաց») բառը, որ համատարած կիրառական է եղել պատմական Հայաստանի գրեթե բոլոր բարբառներում, Գևորգ Չահուկյանը բխեցնում է հնդեվրոպական ***pap(p)a** արմատական բառից¹⁸: Կարծում ենք, որ հայ բարբառների մանկական բառապաշարում կրկին համատարած կիրառվող **մամա** («ուտել») բառն էլ ակնհայտորեն կարելի է բխեցնել հնդեվրոպական ***mam(m)a** արմատական բառից:

Հետաքրքրական է, որ որոշ բառեր էլ զարմանալիորեն համեմատելի են հայերենին ցեղակից լեզուների համապատասխան բառարմատների հետ. «քիթ» նշանակությամբ **թիթի** բառը (Ճահուկ-Վայք) թերևս համեմատելի է խեթերեն **titita** («քիթ»)՝ բառի հետ, «երեխայի կոշիկ» նշանակությամբ **բաբուվ** բառը (Ճահուկ-Վայք)՝ պարսկերեն **papuš** («մաշիկ») բառի, «պաչ, պաչել» նշանակությամբ **մաչ** բառը (Ճահուկ-Վայք)՝ պարսկերեն **muč** («համբույր, պաչ») բառի, «երեխայի երկար զգեստ» նշանակությամբ **չուչիկ** (Տավուշ²⁰), **չուչու** (Վան, Ճահուկ-Վայք) բառերը՝ ռուսերեն **пушпуш** («կանացի երկար զգեստ»), **пушпакан** («գեղջկական կանացի զգեստ») բառերի, «երեխայի արական սեռական անդամ» նշանակությամբ **ճուջու(դ)** (Ճահուկ-Վայք), **ճուջ** (Մուշ), **ճուճ** (Խոյ, Աստապատ²¹), **ճուճուվ** (Բայազետ, Երևան) բառերը՝ պարսկերեն **dudul** բառի, **կուկու** («տիկնիկ, մանկիկ») (Բայազետ, Երևան), **կուգու** («տիկնիկ, մանկիկ») (Ճահուկ-Վայք) բառը՝ ռուսերեն **кукла** («տիկնիկ») բառի, «ջուր» նշանակությամբ **բու** (Վան, Կարին, Ակն, Ճահուկ-Վայք), **բուա** (Խոյ), **բծվա** (Թավրիզ), **ըմպու** (Պոլիս), **փու** (Մուշ, Խաղխաղ)՝ պարսկերեն **ab** («ջուր») բառի հետ և այլն:

Ինչպես նկատվում է, բարբառների մանկաբառերն իրենց մեջ ամփոփում են լեզվական հետաքրքիր իրողություններ, ուստի բարբառագիտական աշխատանքներում անհրաժեշտ է հնարավորինս մանրամասն անդրադառնալ նաև առանձին ուսումնասիրության արժանի այս բնագավառին:

Vardanyan Artak – Children's Vocabulary of Armenian Dialects.– According to the basics of occurrence, the words of children's vocabulary of Armenian dialects can be divided into the following groups: words arising from interjections (**uf** - "pain, hurt ", **äch** - "sweet, pleasant",

¹⁸ Գ. Չահուկյան, *Հայոց լեզվի պատմության նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 275:

¹⁹ J. Tischler, *Hethitisches Handwörterbuch*, Innsbruck, 2001, s. 178.

²⁰ Մ. Մանուչարյան, *Բառարան Տավուշի միջբարբառի Վարազավանի խոսվածքի*, Ե., 2020, էջ 70:

²¹ Պ. Պողոսյան, *Աստապատ. արաբսամերձ հայաշխարհ*, 2005, էջ 92:

akh(a) - "beat"); words arising from onomatopoeia (**vuvu** - "car", **(f)ufu** - "hot food", **me** - "ram"); abbreviated-simplified versions of dialect words (**aja** - "ear", **(ch)achi** - "eye", **okor** - "bone"); words that have survived from the ancient layers of the vocabulary of the Armenian language, worthy of a separate study (**papa** - "bread" (comes from the Indo-European root word ***pap(p)a**), **titi** - "nose" (comparable to the word **titita**, which has that the same meaning in the Hittite language), **bu(a)** - "water " (comparable to the word **ab**, which has the same meaning in Persian).

Варданян Артак – Детская лексика армянских диалектов.– По основам возникновения слова детской лексики армянских диалектов можно разделить на следующие группы: слова, возникшие от междометий (**уф** - "боль, болеть", **äch** - "сладкий, приятный", **ax(a)** - "бить"); слова, возникшие от звукоподражаний (**вуву** - "машина", **(ф)уфу** - "горячая еда", **ме** - "баран"); сокращенные-упрощенные варианты диалектных слов (**аджа** - "ухо", **(ч)ачи** - "глаз", **окор** - "кость"); слова, сохранившиеся от древних пластов лексики армянского языка, достойные отдельного исследования (**папа** - "хлеб" (происходит от индоевропейского коренного слова ***pap(p)a**), **тити** - "нос" (сравнимо с словом **titita**, имеющим тот же смысл в хеттском языке), **бу(а)** - "вода" (сравнимо с словом **ab**, имеющим тот же смысл в персидском языке).